

-Բայց քաջարի մարտիկը հոն առաջնորդել է առաջ, պէտք է հոս յարգել անոր կամքը, կանգ առնելու համար անոր «հոգու խորքում» լայն, մեծ, «արեւափառ» արժեւորուած օրուան, ուր անիկա ընդունեց իր սրբազան մկրտութիւնը, դառնալով, պաշտօնապէս, մեծ կուսակցութեան մը կնուների ակազանին մէջ վտանգաւոր, բայց այնքան անմերժելի ձգողութեամբ տողորուած յեղափոխականը, - կազմուած՝ մեր ժողովուրդին ցրիւ ուժերը հոն համախմբելու, «կտոր-կտոր», բաժան-բաժան սիրտերը միաձուլելու, ու այսպէս հանդերձուած, զրահաւոր, «պողպատահիւս» կուրծքերով միաճակատ իջնելու կրկէս, մեր դարաւոր ոսոխին դէմ: Ասիկա ես նմանցուցի Ֆրանսական վէպերուն մէջ այնքան խռովիչ էջերու ծնունդ տուող առաջին հաղորդութեան: Մաթիկին տարի՞ քր: Հաւանաբար վեր քսանէն:

Կովարած Ակոյի քարայրին մէջ, այդ խօսակցութիւնը խստութեամբ, անգթութեամբ քննադատող, զայն մեր ցեղին ամէնէն վատագի թշնամին յայտարարող Մելիքխանեանը ինքզինքը հակասութեան մէջ չդնելու համար բազմաթիւ դրուագներ պատմեց ինծի, բոլորին մէջ ալ մարդոց ծանրածանր տկարութիւնները «համաձուլելով» իր ընկերներուն վրայ, առանց անշուշտ բաւարար վերլուծումի, որպէսզի իր կորանքը, ստացած վիրաւորանքները, ենթարկուած ծաղրը, հալածանքը ըլլային հասկնալի: Կը տառապէր, մինչեւ իսկ կովարած Ակոյի քարայրին մէջ, որ մարտիկները զինքը շան-բերան կը կոչէին ու չէր անդրադառնար, որ բացուող այդ բերանը մարդիկ պարտաւոր են բռնի գոցել, այնքան քիչ սորված էր լուելը: Կը տառապէր, որ կուսակցական ժողովներուն մէջ իր բոլոր առաջարկները կը մերժուէին ուշադրաւ միաճայնութեամբ մը. իր պաշտպանողականները կ'ընդհատուէին հասարակաց ծաղրին մէջ ու իր հասակը միշտ խոտոր համեմատութեան մէջ կը գտնէին իր մօրուքին, մա'նաւանդ լեզուին հետ: Էջեր չեն բաւեր այս ամբաստանութիւնները գումարելու: